

ԻՆՉՊԵՍ ԳԵՐՄԱՆԻԱՆ ԳԼՈՒԽ ՀԱՆԵՑ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԳՆԱԺԱՄԻՑ

🕒 17.01.2019 👤 by Ճամկորդ 🗨 0 (<https://champord.am/inchpes-germanian-glux-hanec/#respond>) 👁 1339

🔗 Share Post

f Share on Facebook (<http://www.facebook.com/sharer.php?u=https://champord.am/inchpes-germanian-glux-hanec/>)

t Share on Twitter (<http://twitter.com/share?url=https://champord.am/inchpes-germanian-glux-hanec/&text=ԻՆՉՊԵՍ%20ԳԵՐՄԱՆԻԱՆ%20ԳԼՈՒԽ%20ՀԱՆԵՑ%20ՄԻԳՐԱՑԻՈՆ%20ԾԳՆԱԺԱՄԻՑ>)

G+ (<http://plus.google.com/share?url=https://champord.am/inchpes-germanian-glux-hanec/>)

in (<http://www.linkedin.com/shareArticle?mini=true&url=https://champord.am/inchpes-germanian-glux-hanec/>)




«Մենք գլուխ կհանենք»: Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի ոչ մի այլ հայտարարություն այդքան ներքաղաքական բանավեճեր չառաջացրեց, որքան այս մեկը: Եվ իրոք, Գերմանիան գլուխ հանեց: Ավելի քան մեկուկես տարվա ընթացքում ավելի քան 1,5 միլիոն փախստականների ապաստան ստացան այս երկրում:



Յոթ տարի տևող քաղաքացիական պատերազմը եւ օտարերկրյա միջամտությունը Սիրիայում հանգեցրին նրան, որ 2011 թ. Սկսած երկիրը լքեցին 5 միլիոն մարդ՝ ըստ ընդունված միջազգային տերմինաբանության «ներքին տեղահանված անձինք»։ Առկա է սարսափելի հումանիտար աղետ։ Եվրոպական միությունը եւ, առաջին հերթին, գերմանական կառավարությունը, կանցլեր Անգելա Մերկելի գլխավորությամբ, այս աղետին արձագանքեց աննախադեպ հումանիտար միջոցներով՝ սահմանները բացելով փախստականների ընդունման եւ բնակեցման համար։



Հաշվի առնելով, որ ոչ բոլոր ԵՄ անդամները պատրաստ էին նման հումանիտար ակցիայի Գերմանիան ողջ ծանրությունը վերցրեց իր ուսերին: Վերջին մի քանի տարիների ընթացքում Գերմանիան ընդունել է կես միլիոն փախստականներ Սիրիայից, ինչպես նաև Աֆղանստանից, Իրաքից, Սոմալից:



Համաձայնեք, որ շատ կարճ ժամանակում ընդունել տարբեր մշակույթների, տարբեր սոցիալական խավերի, տարբեր արժեհամակարգերի կրողներ հանդիսացող գրեթե կես միլիոն մարդ, ադապտացնել նոր իրողությանը, ինտեգրել գերմանական հասարակության մեջ շատ բարդ է: Եվ այս ամենը պահանջում է հսկայական ռեսուրսներ, ինչպես ֆինանսական, այնպես էլ մարդկային:

“ *Գերմանիան փառքով սուրը պատյանը դրեց. այսօր Գերմանիայում, որը վերջին տարիներին ստացել է փախստականների հիմնական ալիքը, մի շարք փորձագետներ եւ քաղաքական գործիչներ, որոնք խորապես տիրապետում են խնդրին, վստահորեն ասում են, որ երկրում միգրացիոն ճգնաժամը ամբողջությամբ հաղթահարված է:*

Միգրացիոն քաղաքականության ինստիտուտի (https://www.rusmpi.org/?fbclid=IwAR2NgjessC_wG31916R85ZyJ8-eR3wue7Vjcyqa3Y-1NXEik_LEUQfUa6oA) հրավերով լրագրողների համար կազմակերպված այցի շրջանակներում մենք եղանք Բեռլինի Ռեյնիկենդորֆ թաղամասում, որտեղ կառուցված է հատուկ հանրակացարան հունանիտար միգրանտների համար: Մեր առջև 9-հարկանի տիպային շենք էր՝ մեկը այն 14 հանրակացարաններից՝ հատուկ կառուցված գերմանական մայրաքաղաքի փախստականների համար: Գերմանական յուրաքանչյուր հողի համար որոշակի քվոտա կա: Բեռլինում, օրինակ, որոշվել էր 100 հազար մարդ տեղավորել: Յուրաքանչյուր

հանրակացարանում ապրում է շուրջ 230 մարդ: Մեկ սենյակում ապրում է երկու կամ երեք մարդ: Բնակարանների պատերը պատրաստված են հատուկ թեթև փայտից, որոն հնարավոր է ապամոնտաժել, երբ փախստականները կգտնեն մշտական բնակարաններ: Հետագայում դրանք դառնալու են մատչելի վարձավճարով սոցիալական բնակարաններ, քանի որ Բեռլինում բնակարանները շատ թանկ են: Միգրանտներից հետո այս տներում բնակարանները կփոխանցվեն քաղաքի իշխանություններին:



Կացարանային կենտրոնի տնօրեն Շտեֆան Էրհարդտը նշեց, որ 100 հազար փախստականներից միայն 20% -ը բնակվում է հանրակացարաններում: Մնացածը արդեն գտել է սեփական բնակարաններ:

Կացարանային կենտրոնում կազմակերպում են տարբեր դասընթացներ՝ լեզվի կուրսերից սկսած մինչև կին-տղամարդ հարաբերություններին վերաբերող նուրբ հարցեր:



Այսօր, նայելով ընդհանուր պատկերը վստահաբար կարելի է ասել՝ այո, Գերմանիան իսկապես գլուխ հանեց: Որովհետև ինչպես վստահեցրեց միգրանտների հարցերով վարչության մամուլի քարտուղար Մոնիկա Հերինգհաուսը՝ մենք չենք աշխատում մի խմբի հետ, այլ առանձին յուրաքանչյուր անհատի հետ:

Գոհար Հայրապետյան

Tags:

Անգլիա Մերկել (<https://champord.am/tag/%d5%a1%d5%b6%d5%a3%d5%a5%d5%ac%d5%a1-%d5%b4%d5%a5%d6%80%d5%af%d5%a5%d5%ac/>)

Գերմանի (<https://champord.am/tag/%d5%a3%d5%a5%d6%80%d5%b4%d5%a1%d5%b6%d5%ab/>)

ճգնաժամ (<https://champord.am/tag/%d5%b3%d5%a3%d5%b6%d5%a1%d5%aa%d5%a1%d5%b4/>)

միգրացիա (<https://champord.am/tag/%d5%b4%d5%ab%d5%a3%d6%80%d5%a1%d6%81%d5%ab%d5%a1/>)

փախստականներ

(<https://champord.am/tag/%d6%83%d5%a1%d5%ad%d5%bd%d5%bf%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6%d5%b6%d5%a5%a1-%d5%b4%d5%a5%d6%80%d5%af%d5%a5%d5%ac/>)

Share Post

f Share on Facebook (<http://www.facebook.com/sharer.php?u=https://champord.am/inchpes-germanian-glux-hanec/>)